

ԱՐՏԵՄ ՕՐԱՆՋԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

2006թ. օգոստոսին լրանում է Արտեմ Օհանջանյանի 70-ամյակը: Սա մի առիթ է՝ անդրադառնալու նրա բեղմնավոր գործունեությանն ու կենաց ուղուն:



Ծնվել է Իրանում: 1958թ. սովորելու նպատակով տեղափոխվում է Վիեննա, արվեստի մագիստրոսի կոչումով ավարտում երաժշտության և կերպարվեստի ակադեմիայի կինոյի և հեռուստատեսության բաժինը: Հետագայում դառնում է Երևանի և Վիեննայի համալսարանների փիլիսոփայության դոկտոր: 1967-1969թթ. նա դասախոսել է Վիեննայի գեղարվեստի բարձրագույն դպրոցում, 1996թ. Թբիլիսիում բեմադրել ավստրիական թատերադիր Հանս Կրենդլեսթերգերի դրաման: 1992-1993թթ. Օհանջանյանն Ավստրիայում Հայաստանի հանրապետության մշակույթի նախարարության պաշտոնական ներկայացուցիչն էր: 2001թ. հունիսին Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից նրան շնորհում է պատվավոր դոկտորի կոչում, 2003թ.՝ Ֆրիտյոֆ Նանսենի շքանշան, իսկ 2005թ.՝ պատվո ռսկե շքանշան: 2004թ. Ավստրիայում իր գործունեության համար նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Նա Հայոց ցեղասպանության հարցերով Ավստրիայում Հայաստանի հանրապետության գիտությունների ակադեմիայի լիազոր ներկայացուցիչն է:

Շատ ժամանակ կպահանջվեր, եթե հիշատակվեր նրա բեղմնավոր գործունեության բոլոր ոլորտների մասին, սակայն մի քանիսի մասին պետք է հիշատակել, քանի որ նա ոչ միայն պատմաբան է, այլ նաև կինոգործիչ, նաև՝ լրագրող և հասարակական գործիչ: Նրա ընդհանուր առմամբ մոտ 70 կինովավերագրերը, նվիրված՝ մշակույթի, քաղաքականության, կրոնի, տնտեսության, գիտության և պատմության ոլորտներին, համաշխարհային ճանաչում են գտել: Դրա մասին են վկայում

ՀԱՂՈՐ-
ԴՈՒՄՆԵՐ



այն միջազգային մրցանակները, որոնք նա ստացել է «Ֆրանց Վերֆելի Մուսա լեռան 40 օրերը», «Մետաքսի ճանապարհը», «Սերգեյ Փարաջանով» ֆիլմերի համար: Հարկ է հիշել, որ դեռ 1967թ. նա ռեժիսոր Հանս Կրենդելսբերգերի օգնականն էր Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» հայկական էպոսի 16 մասանոց ռադիոներկայացման իրականացման ժամանակ: Այդ աշխատանքը գերմանախոս երկրներում մեծ հաջողություն ունեցավ:

Նրա հռոժավածները Վիեննական «Դեր Շտանդարտ», «Դի Պրեսսե», «Դի Ֆուրխե», ինչպես նաև «Պրոֆիլ» թերթերում, ի շնորհիվ նրա բացառիկ մեկնաբանությունների, նրան համրահայտ են դարձնում նաև որպես լրագրող:

Օհանջանյանը հայ ժողովրդի, միջավրդական և Արևելքի երկրների ժամանակակից պատմության վերաբերյալ մի շարք բարձրակարգ գիտական հրապարակումների հեղինակ է: Թվենք դրանցից մի քանիսը.

«Ավստրիա-Հայաստան 1912-1918թթ. Դիվանագիտական տեղեկագրեր», ֆաքսիմիլային ժողովածու, Վիեննա, 1988թ. (4 հատորով).

«Հայոց ցեղասպանություն», երկրորդ հատոր, Մյունխեն, 1988թ.

«Հայաստան. լռության մատնված ցեղասպանություն», Վիեննա, 1989թ. (թարգմանվել է հայերեն՝ «1915 թվական. անհերքելի վկայություններ» վերտառությամբ, նաև՝ պարսկերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով).

«Ավստրիա-Հայաստան 1872-1936թթ. Դիվանագիտական տեղեկագրեր», ֆաքսիմիլային 12-հատորյա ժողովածու.

«Ֆրանց Վերֆելը և նրա «Մուսա լեռան 40 օրերը» էպոսը», ֆիլմի սցենար, Երևան, 1997թ.

«Հայկական հարցը և Ավստրո-Հունգարիայի ու Գերմանիայի դերակատարումը», Երևան, 2000թ.

Նա համահեղինակն է նաև «Հայաստանի ճարտարապետություն» աշխատության (Վիեննա, 2004թ.):

Հիմա նա վաստակած թոշակի է անցել, սակայն, ըստ երևույթին, նա հիմա ավելի քիչ ժամանակ ունի, քան առաջ, քանի որ ամեն տարի մի քանի գիրք է հրատարակում:

Այս տարի լույս է տեսել (նաև հայերեն) նրա «Ավստրիա-Հայաստան 1872-1936թթ. Դիվանագիտական տեղեկագիր» ժողովածուի հիման վրա կազմված հատընտիրը, իսկ «Հայաստան. լռության մատնված ցեղասպանություն» գիրքը պետք է նույնպես այս տարի վերահրատարակվի: Հայերեն հրատարակվելու է նաև «Հայաստանի ճարտարապետություն» գիրքը:

Երբ «Հայաստան. լռության մատնված ցեղասպանություն» գիրքը 1989թ. լույս տեսավ Վիեննայում, թերթերի մեկնաբանություններն Ավստրիայում և Գերմանիայում բազմաթիվ էին: Հարկ է մեջբերել դրանցից մի քանիսը: «Նոյն Ցայտ»-ը 1989թ. ապրիլի 21-ին գրել է. «... Հեղինակը անհերքելիորեն ապացուցում է մի հանցագործություն, որ իրականացվել էր թուրքական կառավարության կողմից Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իր հայ հայրենակիցների հանդեպ... Հեղինակը՝ Օհանջանյանը, մեջ է բերում մամակներ, ներկայացնում է հատկանշական փաստա-

թղթեր, հիմնովին անդրադարձ է կատարում այն կասկածելի դերակատարմանը, որ ունեցել է ավստրիական միապետությունը և գերմանական կայսրությունը Հայկական հարցում, որոնք պատերազմի ժամանակ Թուրքիայի դաշնակիցներն էին: Հրաշալի աշխատություն»: «Կերնտներ Թագեսցայտունգ»-ը 1989թ. հունիսի 9-ին գրել է. «... Առաջին անգամ այս գրքում 1915թ. Հայոց ցեղասպանությունն ապացուցվում է ավստրիական արխիվների նյութերի հիման վրա՝ այսինքն այն կառավարության արխիվների, որն այն ժամանակ թուրքերի դաշնակիցն էր, և ի հետևանք դրա՝ կայսերական և թագավորական փաստաթղթերը ոչ թե հայանապաստ էին, այլ միգուցե և՛ թուրքանապաստ... Առաջին անգամ դիվանագիտական լայնածավալ մամակագրության հիման վրա ապացուցվում է Գերմանիայի և Ավստրիայի տեղեկացվածությունը և, ելնելով դրանից, նաև մեղսակցությունը... Արդեն այն ժամանակ ավստրիական դիվանագետներն անվանում էին կոտորածները «ցեղասպանություն, ազգի թվաքանակի կրճատում»: Հետագայում տարվող բանավեճերն այն մասին, արդյո՞ք, ընդհանրապես, ցեղասպանություն կատարվեց, արդեն անիմաստ է դառնում»: «Վիներ Ցայտունգ»-ը 1989թ. օգոստոսի 4-ին գրել է. «...Նկատի ունենալով Խորհրդային միությունում և Թուրքիայում Հայկական հարցի արդիականությունը՝ սուս ավելին է, քան պարզապես պատմական մի գիրք: Այն անդրադառնում է կոնֆլիկտի պատմական արմատներին, որոնք մինչև այժմ գործում են և, կարծես իմիջիայլոց, ցույց է տալիս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ավստրո-հունգարական արտաքին քաղաքականության բարոյաքաղաքական վարվելաձևի պատկերը»:

1989թ. հոկտեմբերի 28-ին գերմանական «ԱՅ/Թագրլաթ»-ը գրել է. «...Գիրքը հայտնվեց ճիշտ ժամանակին: Այն առաջարկում է գիտականորեն հիմնավորված փաստաթղթեր թուրքական վայրագությունների մասին նախքան Առաջին համաշխարհային պատերազմը և դրա ընթացքում... Դրա հետ մեկտեղ, ի ցավ մեզ, տեսանելի դարձավ գերմանական նշանակալի մեղսակցությունը. ռազմա-քաղաքական նկատառումները լիակատար հաղթանակ տարան մարդասիրության նկատմամբ, իսկ մեր պետական ատյանները համարձակվում էին մույնիսկ պահանջել լրագրողներից՝ ներկայացնել պատմական իրողությունը կեղծող տեղեկություններ»: Իսկ «Դի Պրեսսե»-ն 1989թ. հունիսի 5-ին գրել է. «...Օհանջանյանը վերլուծում է իր ազգի անցած քիշտ ուղին՝ սկսած անցյալ դարի առաջին կոտորածներից, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած պետականորեն ծրագրավորված ցեղասպանությունից, և մինչև այսօրվա ճնշումները: Դրանով հեղինակը բացատրում, ապացուցում է, որ խոսքը միայն արևելյան խնդրի մասին չէ: Թուրքիայի դաշնակիցները՝ իմա Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, այն ժամանակ ոչինչ չձեռնարկեցին Ասիայում գտնվող իրենց քրիստոնյա եղբայրներին փրկելու համար, չնայած, նրանք տեղյակ էին իրերի ընթացքին... Օհանջանյանը լիովին արժանահավատ ձևով վերջ դրեց այն տարածված տեսակետին, որ հայկական ջարդեր երբեք տեղի չեն ունեցել: Միայն ավստրիական և գերմանական արխիվներում գտնվող բազմաթիվ փաստաթղթերը բավական են՝ նրա հետաքրքիր վերլուծությունը հիմնավորելու համար»:

Իրոք՝ Օհանջանյանն առաջիններից մեկն էր, որ, ապացուցեց հայոց ողբերգական ճակատագրի մեջ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի մեղսակցությունը: Դրանից հետո գերմանական և ամերիկյան պատմաբանները զննցին նրա հետքերով և այդ թեմային մի շարք անդրադարձումներ ունեցան:

Օհանջանյանի կազմած տեղեկագրերի ժողովածուն Հայկական հարցի ուսումնասիրման մեջ մեծ նշանակություն ունի: Նրա տեղեկագրերի ժողովածուի մասին, որ Օհանջանյանը հրատարակեց 1995թ., ես գրել եմ. «...Հնարավոր չէ Հայկական հարցի վերաբերյալ մի լուրջ աշխատանք շրջանցի Օհանջանյանի հրատարակությունները»:

Առաջին անգամ նրա աշխատասիրություններում ապացուցվում է, ըստ ավստրո-հունգարական փաստաթղթերի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի մեղսակցությունը հայերի ճակատագրում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (առանցքային փաստաթղթերը այդ իրադարձությունների վերաբերյալ հանդիսանում են Կ. Պոլսում ավստրո-հունգարական դեսպան Պալլավիչիների՝ 1915թ. օգոստոսի 13-ի («Մի ցեղի ոչնչացում»), ավստրո-հունգարական ժամանակավոր գործերի հավատարմատար Տրատմանսդորֆի՝ 1915թ. սեպտեմբերի 30-ի («Հայկական ցեղի ոչնչացումը») և ավստրո-հունգարական հյուպատոս Նադամլենսկու՝ 1915թ. նոյեմբերի 6-ի («Մի ամբողջ ազգի ցեղի ոչնչացում») գեկույցները):

«Գեմնոցիդ» բառը միայն 1944թ. է ստեղծվել: Ժողովուրդների իրավունքի նշանավոր ավստրիական մասնագետ պրոֆեսոր դոկտոր Ֆելիքս Էրմակորան հաստատել է, որ 1915-1918թթ. դեպքերի տարրերը համապատասխանում են իր՝ 1944թ. սահմանած «գեմնոցիդ» հասկացությանը:

Օհանջանյանի աշխատությունները միջազգային ճանաչում են գտել. նրանք Ավստրիայում, Գերմանիայում, Հայաստանում և ԱՄՆ-ում համարվում են գիտական աշխատանքների օրինակելի նմուշներ:

Հարկ է նշել նաև Ավստրիայում, Գերմանիայում, Հայաստանում, Ռուսաստանում և Իրանում թեմային վերաբերող նրա զեկուցումների մասին: Օհանջանյանը հանդիսանում էր Ավստրիայի ներկայացուցիչն արտասահմանում տեղի ունեցած մի շարք գիտական վեհաժողովներին: Նաև ավելացնեմք, որ 1986թ. Բրյուսելում ընթացող «Եվրոպայիայում» նա ներկայացել էր «Հայկական վանքերը Իրանում» ֆիլմով:

Նա Ավստրիայի Ֆրանց Վերֆել կոմիտեի փոխնախագահն է, մեկն է միջազգային այն պատմաբան-փորձագետներից, որոնք ներկայացվում են միջազգային հայկական վեհաժողովներին:

Ֆիլմերի և դասախոսությունների միջոցով Օհանջանյանն ավստրիական մշակույթը տարածել է մինչև Արևելք և դրա միջոցով Ավստրիան ներկայացնում է աշխարհին:

Ես սրտանց ցանկանում եմ Արտեմ Օհանջանյանին «Ar multos annos» (ստեղծագործական երկար տարիներ (լատ.)):

Վուֆդիտեր Բիլ
Համալսարանական դոկտոր պրոֆեսոր
Վիեննա